Известия НАН РА, Науки о Земле, 2003, **LVI**, *№3, 67*

ԷՄԻԼ ՎԱՂԻՆԱԿԻ ԱՆԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության երկրաբանական գիտությունը ծանր կորուստ կրեց: 2003թ. դեկտեմբերի 13-ին, կյանքի 66-րդ տարում, հանկարծամահ եղավ երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու, ավագ գիտաշխատող Էմիլ Վաղինակի Անանյանը: Կյանքից հեռացավ մի գիտնական որի աշխատանքները մեծ նշանակություն ունեին մեր հանրապետության տեկտոնական կառուցվածքը ճիշտ պատկերացնելու գործում:

Է.Վ.Անանյանը ծնվել է 1937թ. սեպտեմբերի 17-ին, Երևանում: 1959թ. ավարտել է Երևանի Պետական համալսարանի Երկրաբանական ֆակուլտետը և ընդունվել ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի տեկտոնիկայի բաժինը: 1962թ. ընդունվել է Հայաստանի ԳԱ ասպիրանտուրա և համալրել Վ.Վ.Բելոուսովի ստեղծած դպրոցի աշակերտների շարքերը:

1968թ. հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Կապանի բրախիանտիկլինորիումի և հանքային դաշտի առաջացման մեխանիզմը» թեմայով և ստացել երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածուի աստիճան:

1967թ-ից Է.Վ.Անանյանը մասնակցել է երկրաշարժերի կանխատեսման, ինչպես նաև երկրակեղևի և վերին մանթիայի խորքային կառուցվածքի ու զարգացման պրոբլեմների լուսաբանմանն ուղղված աշխատանքներին: Միևնույն ժամանակ նա մասնակցել է Ալպ-Հիմալայան ծալքավոր գոտու խզումնային խախտումների քարտեզի կազմման աշխատանքներին:

1971թ-ից Ալավերդու օգտակար հանածոներն ուսումնասիրող արշավախմբի կազմում Է.Վ.Անանյանը զբաղվել է Դեբեդ-Աղստև միջագետքի և Հյուսիսային Հայաստանի երկրաբանական կառուցվածքին, օգտակար հանածոների տեղաբաշխմանը և ծալքավոր ու խզումնային խախտումներին վերաբերվող ուսումնասիրություններին:

1975թ-ից Է.Վ.Անանյանը մասնակցել է Հարավ-Ուկրաինական և Ղրիմի ատոմակայանների տեղի որոշման և երկրաբանական քարտեզների կազմման աշխատանքներին: Այդ տարիներին նա կատարել է նաև աշխատանքներ նվիրված օֆիոլիթների պրոբլեմին:

1981-85թթ. Է.Վ.Անանյանը կատարել է տեկտոնական ուսումնասիրություններ Հայաստանի երկրակեղևի բլոկային կառուցվածքի, տեկտոնական գոտիների անջատման, նստվածքային ծածկույթի ստրուկտուրային բնույթի և երկրաշարժերի կանխատեսումնային ծրագրերին: Այդ աշխատանքների արդյունքում նրա կողմից կազմվել է «Հայաստանի Հանրապետության տարածքի խզումնային խախտումների քարտեզը», ՀՀ տարածքի տեկտոնական շրջանացման սխեման, տարանցիկ երկրաֆիզիկական կտրվածքներ և այլն:

1990թ. ձեռնամուխ է եղել «ՀՀ տարածքի ծալքավոր ու խզումնային կառույցների» ուսումնասիրմանը և ներկայացրել ամփոփիչ հաշվետվություն՝ ՀՀ տարածքի 1:200000 մասշտաբի երկրաբանա-կառուցվածքաբանական քարտեզով հանդերձ:

Է.Վ.Անանյանը 45 գիտական աշխատանքների և բազմաթիվ գիտա-արտադրական ու երկրաբանական առաջարկությունների հեղինակ է:

Է.Վ.Անանյանը մեծ հարգանք էր վայելում իր ընկերների, կոլեգաների և հարազատների շրջապատում: Նրա հիշատակը միշտ վառ կմնա հարազատների և ճանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական
գիտությունների ինստիտուտ